ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «15» ապրիլ 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 12-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով 2018թ. մարտի 23-ի «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի 12-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի միջև 2019 թվականի հունվարի 25-ին կնքված «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» համագործակցության ծրագրի դրույթները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահի
2019 թ. ապրիլի 15-ի
թիվ 12-Ա/Ք հրամանի

ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) աջակցության մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) միջև 2019 թվականի հունվարի 25-ին կնքված «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին » համագործակցության ծրագրի դրույթների:

1.2. Կոմիտեն 12 կամ 24 ամիս տևողությամբ թվով մինչև 5 դրամաշնորհներ կտրամադրի գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար՝ բազային ֆինանսավորման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում ծրագրի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ենթածրագրի միջոցների հաշվին:

1.3. Հայտերը կարող են ներկայացվել Հավելված 1-ում բերված բնագավառների և մասնագիտությունների գծով:

1.4. Մրցույթին մասնակցության գիտական նախագծերի հայտերը (այսուհետ՝ Հայտ) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության գիտնականներից կազմված խմբերի կողմից:

1.5. Հայտը չի քննարկվում, եթե՝

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ թեմայի կամ ծրագրի հետ,

- նախկինում իրականացված թեմայի կամ ծրագրի վերաբերյալ հեղինակի կողմից հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթի:

1.6. Հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում ղեկավարը պետք է գործի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթներին համապատասխան: Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

1.7. Ծրագրի շրջանակներում համատեղ ստացած գիտական արդյունքի նկատմամբ հեղինակային իրավունքի շուրջ ծագած վեճերը հայաստանյան և իտալական կողմի ղեկավարները պետք է լուծեն խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:

1.8. Ծրագրի շրջանակներում համատեղ իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի և Խորհրդի կողմից ստացած աջակցության մասին.

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳԿ-ի ___ և ԻՀ ԱՀԽ ___ գիտական համատեղ ծրագրի շրջանակներում:

This work was supported by the RA MES Science Committee and National Research Council of the Republic of Italy in the frames of the joint research project _____ and ____ accordingly.

1.9. Ծրագրի իրականացման ընթացքում Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (12-ամսյա) և իսկ ավարտից հետո՝ ամփոփիչ Հաշվետվություն, որը ենթարկվում է գիտական փորձաքննության:

1.10. Ծրագրի ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ Հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի գիտական փորձաքննության բացասական եզրակացության հիման վրա:

1.11. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի և Հաշվետվության անոտացիաները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1. Հայաստանյան խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ, ինչպես նաև Ծրագրի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Նախագծի հայաստանյան խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության գիտական պետական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության աշխատողներ, ունենան առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի բարձրագույն կրթության որակավորման աստիճան:

2.3. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Ծրագրերի ֆինանսավորման սկիզբը:

2.4. Խմբի ղեկավար կարող է լինել գիտական աստիճան ունեցող մինչև 70 տարեկան անձը (ում 70 տարին չի լրացել մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը), որն ունի առնվազն 5 (հինգ) տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում Scopus և Web of Science միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա որևէ պետության բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրապարակված առնվազն 5 (հինգ) հոդված կամ 2 (երկու)՝ առնվազն 5 (հինգ) տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բուհի գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): Մեկ մենագրությունը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված 3 (երեք) հոդվածի:

2.5. Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.6. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ անձ՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի բարձրագույն կրթության որակավորման աստիճան ունեցող կամ մագիստրատուրայի ուսանող:

2.7. Մրցույթի հայաստանյան և իտալական կողմերի հայտատուները միմյանց հետ համաձայնեցնում են ներկայացվող նախագծի բովանդակությունը, որը կարող է տարբեր

լինել՝ կախված կողմերի առջև դրված խնդիրներից, սակայն ներկայացված նախագծի վերնագրերը պետք է համընկնեն: Վերջնականապես ձևավորված և համաձայնեցված Հայտը հայաստանյան կողմը ներկայացնում է Կոմիտե, իսկ իտալական կողմը՝ Խորհուրդ:

2.8. Սույն Մրցույթին չեն մասնակցում այն նախագծերի Հայտերը, որոնք՝

- ներկայացվել են միայն Կոմիտե կամ միայն Խորհուրդ,
- Կոմիտեում կամ Խորհրդում ստացվել են Հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետներից ուշ,
- լրացվել են ոչ ըստ Հայտերին ներկայացվող պահանջների,

2.9. Հայտի համապատասխանությունը վերը նշված պայմաններին երաշխավորում է ղեկավարը:

3. Հայտ ներկայացնելը

3.1. Հայտը (Հավելված N 2) լրացնում և ներկայացնում է խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2019 թվականի հունիսի 28-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

3.2. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Ղեկավարի դիմումը (Հավելված N 3),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը,
- Խմբում փոխկապակցված անձանց (ընտանիքի անդամներ՝ ծնող, երեխա, եղբայր, քույր, ամուսին) առկայության մասին տեղեկատվությունը՝ ղեկավարի ստորագրությամբ,
- մինչև 35 տարեկան մասնակցի (մասնակիցների)
  - ասպիրանտ կամ մագիստրատուրայի ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին,
  - դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմի պատճենը:

3.3. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ)

կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2019 թվականի հուլիսի 8-ը ներառյալ:

Ուշադրություն. Հայտերը, որոնք չեն ուղարկվել ըստ վերը նշված կարգի և մինչև վերը նշված ժամկետը ու չունեն ծածկագիր, քննարկման ենթակա չեն: Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը:

3.4. Մրցույթին մասնակցության համար իտալական կողմին ներկայացվող պահանջներին կարելի է ծանոթանալ https://www.cnr.it/it/accordi-bilaterali/accordo/65/mesra-science-commitee-of-the-ministry-of-education-and-science կայքէջում:

4. Նախագծերի գիտական փորձաքննությունը

4.1. Հայտերը ենթարկվում են գիտական փորձաքննության. հայաստանյան կողմի ներկայացրած Հայտերի փորձաքննությունը կազմակերպում է Կոմիտեն, իսկ իտալական կողմինը՝ Խորհուրդը:

4.2. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Ծրագրի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, իրականացման նախադրյալները, ղեկավարի և խմբի ձեռքբերումները գիտության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը նախատեսված հետազոտությունների իրականացմանը, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների և նախահաշվի հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության մակարդակը, գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր (Հավելված N 4):

4.3. Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

4.4. Հայաստանյան և իտալական կողմի ղեկավարների և հայաստանյան կատարողների մասնագիտական որակավորումը գնահատվում է համաձայն Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության (Հավելված N 5):

4.5. Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ընդհանուր քանակը որոշվում է՝ հիմնվելով երկու կողմերի փորձաքննության արդյունքների վրա:

4.6. Սույն Մրցույթի արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

4.7. Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո Կոմիտեն խմբի ղեկավարին է տրամադրում գիտական փորձաքննության արդյունքները, տվյալ բնագավառի շեմային գնահատականը, Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը:

4.8. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է տվյալ կազմակերպության ֆինանսավորման երաշխավորված Ծրագրերի ցանկը և յուրաքանչյուր Ծրագրի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

5. Այլ դրույթներ

5.1. Սույն Մրցույթի արդյունքները կամփոփվեն **2019 թվականի 4-րդ եռամսյակում**:

5.2. Կոմիտեի, ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի ղեկավարի, ինչպես նաև Կազմակերպության ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր:

5.3. Կողմերից յուրաքանչյուրը ֆինանսավորում է իր կողմի գիտական խմբի աշխատանքների հետ կապված ծախսերը:

5.4. Հայաստանյան գիտական խմբի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալը կազմում է մինչև 5000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), որի առնվազն 70 տոկոսը պետք է ուղղվի գործուղումներին: Մնացած մասը կարող է ուղղվել նյութերի և փոքր սարքավորումների ձեռքբերմանը, իսկ մինչև 7 տոկոսը կարելի է նախատեսել «Վերադիր ծախսեր»-ի համար, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է Ծրագրի կատարման համար անհրաժեշտ պայմաններ:

5.5. Ծախսերի նախահաշվում հաշվարկվում է նաև ԱԱՀ, որը կազմում է հայցվող գումարի 20% -ը:

5.6. Գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես համագործակցող իտալական կազմակերպություն այցելության համար, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: Օտարերկրյա այցելությունները պետք է նախատեսվեն առնվազն 3 օր տևողությամբ:

5.7. Մինչև երկու շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը պետք է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր

անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսյա կտրվածքով):

5.8. Ղեկավարի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Ծրագրի ֆինանսավորումը դադարեցվում է: Խմբի անդամի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում ղեկավարը 10-օրյա ժամկետում պետք է դիմի Կոմիտե՝ գիտական գործունեության արդյունավետության և տարիքային խմբի համարժեք փոփոխություն կատարելու առաջարկությամբ:

Հավելված N 1

«ՀՀ ԿԳՆ ԳԿ ԻՀ ԱՀԽ-2019» մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.02 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.03 Ֆիզիկա և աստղագիտություն

1.04 Քիմիա

1.06 Կենսաբանական գիտություններ (միայն *Մոլեկուլային կենսաբանություն*)[1]

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.01 Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.02 Բուսաբուծություն

4.03 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.04 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

4.05 Այլ գյուղատնտեսական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.01 Պատմություն և հնագիտություն (միայն *Հնագիտություն)*[1]

6.05 Արվեստագիտություն

---

[1] Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի միջև 2019 թվականի հունվարի 25-ին կնքված «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» համագործակցության ծրագրի՝ սույն մրցույթի շրջանակներում 1.06 և 6.01 մասնագիտությունների գծով ընդունվում են հայտեր միայն *մոլեկուլային կենսաբանության* և *հնագիտության* ուղղություններով:

Հավելված N 2

Ձև 1

<u>Ուշադրություն:</u> Ստորև բերվող բոլոր ձևերը նպատակ ունեն ծանոթացնելու առցանց լրացվող ձևերի հետ և դյուրացնելու առցանց լրացնելու գործընթացը:

ՀԱՅՏ

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

«ՀՀ ԿԳՆ ԳԿ - ԻՀ ԱՀԽ- 2019» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Հայտը հանձնված է «_____» _____ 2019թ. Ծածկագիր՝ _____

(լրացվում է Կոմիտեում)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի վերնագիրը, բնագավառը և մասնագիտական դասիչը, բնույթը
2. Հուշող (բանալի) բառեր
3. Խմբի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն, ռուսերեն և անգլերեն), ծննդյան թիվը, գիտական աստիճանը, պաշտոնը, հեռախոսը և էլեկտրոնային փոստի հասցեն
4. Կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գերատեսչական պատկանելությունը, հասցեն, հեռախոսը և էլեկտրոնային փոստի հասցեն
5. Հայտի իտալական կողմի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն և անգլերեն), ծննդյան թիվը, գիտական աստիճանը, պաշտոնը, հեռախոսը, էլեկտրոնային հասցեն, վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10)
6. Իտալական կողմի կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն (հայերեն և անգլերեն), էլեկտրոնային փոստի հասցեն, կայքէջը
7. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը
8. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը
9. Իտալական խմբի անդամների (ներառյալ ղեկավարը) թիվը
10. Հայցվող ընդհանուր գումարը
11. Վերադիր ծախսերի գումարը
12. ԱԱՀ

Ղեկավարի ստորագրությունը _____

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը _____

«____» _____ 2019 թ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ

Համառոտ ներկայացնել նախագծի նպատակներն ու խնդիրները՝ հայերեն և անգլերեն

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 10 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը,

1. խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, ծրագրի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները, իտալական խմբի կողմից լուծվելիք խնդիրները (մինչև 5 էջ),

2. տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները, համագործակցության հիմնավորվածությունը, հեռանկարայնությունը, համագործակցության մակարդակը, արդյունքների կիրառելիությունը, փոխայցելությունների նպատակահարմարությունը, դրանց քանակը և տևողությունը (մինչև 5 էջ),

3. օգտագործված գրականության ցանկը:

ՄԻՆՉԵՎ 3 ԱՆՑԱՆԿԱԼԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

№	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ
1.	
2.	
3.	

Ձև 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՂՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

1. *Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)*
2. *Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը*
3. *Կրթությունը (բուհ, մասնագիտություն)*
4. *Գիտական աստիճանը*
5. *Վերջին թեզի վերնագիրը, մասնագիտական դասիչը, պաշտպանության տարեթիվը և վայրը*
6. *Աշխատանքի վայրը, պաշտոնը*
7. *Հեռախոսը (աշխատանքային, բջջային)*
8. *Էլեկտրոնային փոստի հասցեն*
9. *Վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10)*

Ձև 3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

1. *Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)*
2. *Ծննդյան տարեթիվը*
3. *Կրթությունը (բուհ, մասնագիտություն)*
4. *Գիտական աստիճանը*
5. *Աշխատանքի վայրը, պաշտոնը*
6. *Հեռախոսը (աշխատանքային, բջջային)*
7. *Էլեկտրոնային փոստի հասցեն*
8. *Վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10)*

Ձև 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

1. *Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)*
2. *Ծննդյան տարեթիվը*
3. *Կրթությունը (բուհ, մասնագիտություն)*
4. *Գիտական աստիճանը*
5. *Աշխատանքի վայրը, պաշտոնը*
6. *Հեռախոսը (աշխատանքային, բջջային)*
7. *Էլեկտրոնային փոստի հասցեն*

Ձև 4

ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

ԾԱԽՍԵՐ, այդ թվում		
1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ	2020	2021
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)		
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր		
2) տեղական գործուղումների օրապահիկ		
3) տեղական գործուղումների գիշերավարձ		
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր		
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ		
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ		
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
3, ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ		
4 . ԱՎԵԼԱՑԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ		
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (հայերեն և անգլերեն՝ յուրաքանչյուրը մինչև 500 բառ)		

Հայտի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

_____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կ.Տ

Հավելված N 3
«ՀՀ ԿԳՆ ԳԿ ԻՀ ԱՀԽ-2019» մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի **«ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019»** միջազգային մրցույթին --------- ծածկագրով առցանց ներկայացված Հայտի փաստաթղթերը.

Կից ներկայացվող փաստաթղթերը՝

- Տիտղոսաթերթ,
- Նախահաշիվ,
- Խմբի մինչև 35 տարեկան մասնակցի (մասնակիցների) ասպիրանտ կամ մագիստրանտ հանդիսանալու մասին տեղեկանք (ներ),
- Դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմի պատճենը,
- Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը,
- Խմբում փոխկապակցված անձանց (ընտանիքի անդամներ՝ ծնող, երեխա, եղբայր, քույր, ամուսին) առկայության մասին տեղեկատվությունը՝ Խմբի ղեկավարի ստորագրությամբ:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2019 թ.

Հավելված N 4
«ՀՀ ԿԳՆ ԳԿ ԻՀ ԱՀԽ-2019» մրցույթի հրավերի

Փորձագիտական եզրակացություն Ծածկագիր _____
Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր **(0,5 միավորի ճշտությամբ),** հետևյալ սանդղակով

Չափանիշներ/մեկնաբանություններ	**Գնահատական**
Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը: - *խնդրում ենք մեկնաբանել*	
Որքա՞ն հստակ են ձևակերպված գիտական ծրագրի խնդիրներն ու նպատակները: - *խնդրում ենք մեկնաբանել*	
Որքանո՞վ է գիտական ծրագիրը նորարարական (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, սիստեմների և մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն): - *խնդրում ենք մեկնաբանել*	
Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող գիտական ծրագրի իրականացումը և շարունակականությունը: - *խնդրում ենք մեկնաբանել*	
Նախատեսվող ծրագրի արդյունքների կիրառելիությունը: - *խնդրում ենք մեկնաբանել*	
Ի՞նչ մակարդակի վրա է գտնվում երկկողմ համագործակցությունը (վերջին 10 տարիներին համատեղ հրապարակումների առկայությունը) և որքանո՞վ է այն հեռանկարային: - *խնդրում ենք մեկնաբանել*	
Որքանո՞վ է համապատասխանում փոխայցելությունների պլանավորումը գիտական ծրագրի նպատակներին և որքանո՞վ է հիմնավորված ծախսերի նախահաշիվը: - *խնդրում ենք մեկնաբանել*	
Հայաստանյան կողմի ղեկավար: Որքանո՞վ է համապատասխանում հայաստանյան կողմի ղեկավարի մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
Երիտասարդ մասնագետներ: Որքանո՞վ են համապատասխանում խմբում ընդգրկված երիտասարդ մասնագետների (մինչև 35 տարեկան) մասնագիտական ուղղվածությունը և որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
Իտալական կողմի ղեկավար: Որքանո՞վ է համապատասխանում իտալական կողմի ղեկավարի մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	

Ընդհանուր գնահատականը	**Այլ մեկնաբանություններ/նկատառումներ** - *խնդրում ենք մեկնաբանել*	

Փորձագետ՝_____ (անուն, ազգանուն)

_____ _____
(ստորագրություն) (ամսաթիվ)

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ E) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) Գիտական ամսագրերի հրապարակումների: Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Science և Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններերի (այսուհետ՝ ՄԳՇ), ԲՈԿ ցանկերում ընդգրկված ամսագրում:

$$E_1 = \sum IF \frac{(1+C/10)^{1/3}}{N^{1/3}},$$

<u>Յուրաքանչյուր հոդվածի կամ ակնարկի համար</u>՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների /համաղեկավարների/ համամրցանակակիրների թվաքանակ,

C՝ հղումների քանակ՝ *առանց ինքնահղումների,*

0.2*-ից ցածր* ***IF****-ի դեպքում նրան վերագրվում է՝*

0.2՝ *ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց ՄԳՇ ցանկերում ընդգրկված ամսագրի դեպքում,*

0.15՝ *ԱԳ չունեցող, ՄԳՇ ցանկերում չընդգրկված, բայց ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի դեպքում:*

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտամեթոդական ձեռնարկների, նյութերի կամ հոդվածների ժողովածուների հրապարակումների:

Մենագրություն, կոլեկտիվ մենագրություն, գիտամեթոդական ձեռնարկ, նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված հեղինակ(ներ)ի գիտական արդյունքներին վերաբերող (ընդգրկող), հետազոտողների (researchers) համար նախատեսված և ISBN ունեցող հրապարակում: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, փաստաթղթերի ժողովածուները, դասագրքերը, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի խմբագրումը և կազմումը:

$$E_2 = \begin{cases} \sum B \dfrac{P_{Sh} \cdot (1+C/10)^{1/3}}{N^{1/3}}, \\ \sum CA \dfrac{(1+C/10)^{1/3}}{N^{1/3}}, \end{cases}$$

<u>Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության կամ գիտամեթոդական ձեռնարկի մասի, նյութերի կամ հոդվածների ժողովածուի նյութի կամ հոդվածի համար</u>՝

B=0,25՝ *օտար լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,*

B=0,20՝ *հայերեն լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,*

B=0,15՝ *գիտամեթոդական ձեռնարկ կամ օտար լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,*

B=0,10՝ *հայերեն լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,*
CA=0,20՝ *օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,*
CA=0,10՝ *հայերեն լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,*
P_{Sh}՝ *ծավալ (տպագրական մամուլ, 16 էջ):*

3) Գիտաժողովների մասնակցության: Գիտաժողովների թեզիսները (Abstract) և նյութերում չընդգրկված ստենդային զեկույցները (Poster) չեն գնահատվում:

$$E_3 = \begin{cases} \sum T \dfrac{1}{N^{1/3}}, \\ \sum \mathrm{P} \dfrac{(1 + C/10)^{1/3}}{N^{1/3}}, \end{cases}$$

<u>Յուրաքանչյուր</u> պլենար *<u>զեկույցի կամ գիտաժողովի նյութերում (Proceeding) հրապարակման համար՝</u>*

T=1,00՝ *արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց,*
T=0, 50՝ *ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց,*
P=0,15՝ *արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի նյութ,*
P=0,10՝ *ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:*